

ՀԱՅՈՑ ԱՆՎԱՆՄԱՆ ԲԱՆԱՁԵՎԵՐԸ

Տ. Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հայոց մարդանունների¹ համակարգի ամենահետաքրքրական դրսևորում-ներին է անվանման բանաձևը: Վերջինս բնութագրվում է որպես «անձի պաշտոնական անվանման մեջ մարդանունների և նոմենների² տարբեր տեսակների դասավորության որոշակի կարգ»³:

Փաստական նյութի վերլուծությունը անվիճելի է դարձնում երևույթի նկատմամբ տարբերակված մոտեցման անհրաժեշտությունը, քանի որ կասկածից վեր է սոցիալական տարբեր խմբերի և անվանման բանաձևերի փոխհարաբերության առանձնահատկությունը: Այսպես, անվանման հարցում հոգևորականությունը ամենից ավանդապահն է: Դարեր շարունակ նրա անվանման բանաձևերը կառուցվածքային նկատելի փոփոխություններ չեն կրել: Դրանք առավելապես երկբաղադրիչ են՝ մի դեպքում անձնանուն + տեղանուն, մյուս դեպքում անձնանուն + նոմեն կաղապարներով: Օրինակ՝ Գէորգ Գառնոյ, Տաճատ Աղձնեաց, Կիրակոս եպիսկոպոս, Զւիթերեց և այլն: Այստեղ ավելի ճիշտ կլինի խոսել մեկ ընդհանուր եռանդամ բանաձևի և նրա երկու տարբերակների մասին՝ Կիրակոս եպիսկոպոս Տայոց, Անանիա եպիսկոպոս Սիւնեաց և՝ Կիրակոս Տայոց, Անանիա եպիսկոպոս ու Անանիա Սիւնեաց: Իբրև ասվածի ապացույց կարելի է նշել, որ տեքստերում վերոհիշյալ երկանդամ և եռանդամ բանաձևերը աղատորեն փոխարինում են միմյանց: Հոգևորականության ավանդապահությունը ապացուցվում է նաև V և XV դդ. վերջված օրինակներով՝ Աթիկ Բջնեցի, Ղևոնդ Վանանդեցի, Դանան Եկեղեցացի, Ենովք Սպերցի և Զաքարիա Տեղերցի, Թովմաս Պուտլիկցի, Կիրակոս Ռշտունցի, Ղաղար Բաղիշեցի և այլն:

Բարձր խավի անվանման բանաձևերը խիստ բաղմաղան են և, որ ամենակարևորն է, մեկուկես հազարամյակի նյութերի հիման վրա կարելի է պնդել, որ նաև՝ ավանդախախտ: Ընդ որում կասկածից վեր է, որ որքան ոչ կայուն է երկրի քաղաքական, սոցիալ-տնտեսական կյանքը, այնքան բազ-

¹ Անունադիտական հետադոտությունների ծավալումը հրամայական պահանջ է դարձնում ճշտումներ մտցնել այդ բնագավառի տերմինաբանության մեջ: Ընդունում ենք հատուկ անուն (ОНИМ) և նրա երկրորդ բաղադրիչով կազմված տեղանուն (ТОПОНИМ), մարդանուն (АНТРОПОНИМ) տերմինային շարքը, վերջինիս համար հաճախ կիրառվող անձնանուն տերմինը թողնելով մարդանվան մի տեսակը նշելու համար (տե՛ս նաև ծան. 5):

² Նոմեն տերմինին տրվում է հետևյալ մեկնաբանությունը. բառապաշարի այն շերտը, որ տեքստում և խոսքի մեջ գործածվում է անունների տարբեր տեսակների հետ: Մասնավորապես մարդանունների հետ դրվում են ազգակցություն ցույց տվող (որդի, հայր, դուստր, եղբայր, կողակից, ամուսին), տիտղոս և պաշտոն ցույց տվող (իշխան, նահապետ, մարդսպան, մարդպետ, սեպուհ, տանուտեր, մարաչխտ, պարոն, հարյուրավադ, քալանթար, ինչպես նաև՝ վարդապետ, քահանա, եպիսկոպոս, երեց, տեր, հաջի, մագիստրոս, սարկավադ, մահտեսի), արհեստներ ու զբաղմունք ցույց տվող (ոսկերիչ, գդակկար, կազմող, գիտնական, քարակոփ, հյուան, խոջա, սհատիք) և այլ բառեր:

³ Н. В. Подольская, Словарь русской ономастической терминологии, М., 1978, с. 35.

մազան ու բազմաբաղադրիչ են այդ խավի անվանման բանաձևերը: Այսպես, միջին դարերում հանդիպում են բազմանդամ կաղապարներ՝ Աբլխարիփ Հայոց մարզպան որդի Գրիգոր Իշխանի որդու Ապուլամբի յազգէ Պալիատունի ի տանէ Արշակունեաց և Շապուհիկ իշխանաց իշխան որդի Փարբանիէլի ի տոհմէ Պալիատունի յազգէ Արշակունեաց և այլն, այսինքն համապատասխանաբար 12 և 9 անդամանի բանաձևեր:

Երրորդ խավը, որի մեջ, ուսումնասիրվող հարցի տեսանկյունից, կարելի է դասել շինականներին, արհեստավորներին, զինվորներին և մասամբ ցածրաստիճան հոգևորականներին, ներկայացված է համեմատաբար աղքատիկ նյութով, որը, սակայն, բավարար է ցույց տալու, որ այսօրվա եռանդամ բանաձևի հայրանուն բաղադրիչի ձևավորման ակունքները այս խավի ընդերքում պետք է փնտրել: Դրանով է բացատրվում նաև, որ XIX դարում, երբ ձևավորվում էր անձնանուն-հայրանուն-ազգանուն բանաձևը, հայրանունն այնպես էլ ձևավորվում էր տասնամյակի ընթացքում փոխարինեց իր-ով ձևը և քաղաքացիություն ստացավ⁴:

Ինչպես վկայում են փաստերը, գործունեության ու արտաքին հարաբերությունների սահմանափակ ոլորտի, ինչպես նաև օբյեկտիվ ալլ պատճառների բերումով անվանման բանաձևերի խստիվ պահպանումը այդ խավի համար առաջին անհրաժեշտություն չի եղել, իսկ այն բացառիկ դեպքերում, երբ աղբյուրները հիշատակում են այդ խավի որևէ ներկայացուցչի անուն, բավարարվում են գլխավորապես անձնանունը նշելով և միայն երբեմն, հետևելով ժամանակի ավանդույթին, ավելացնում են երկրորդ և խիստ հազվադեպ՝ մի երրորդ բաղադրիչ:

Այսպես, IV դարից վկայված են՝ Այծեմնիկ, մի նահատակ՝ Ստեփանոս Ուլնեցի, նրա հայրը՝ Ղազարոս, մայրը՝ Մարիամ, Ղևոնդ ծերունի՝ Դավիթ, Ստեփան, Թադէոս որդիներով, միայնակյացներ՝ Տրդատ կամ Տրդած, Մուշեղ, Վասակ, Արտուր, Մարախ, Առուստամ անունները: Փաստերը սակավաթիվ են, իսկ եղանակներն էլ ներկայացվում են պարզազույն բանաձևով՝ Ա՜,

⁴ Ուսումնասիրության ընթացքում օգտվել ենք հետևյալ աղբյուրներից. հայոց պատմիչներ: «Իրվան հայ վիմագրության», պրակ 1-ին, Երևան, 1966. պրակ. 2-րդ, Երևան, 1960. պրակ 3-րդ, Երևան, 1967. պրակ 4-րդ, Երևան, 1973. պրակ 6-րդ, Երևան, 1977: Սիմեոն Երևանցի, Զամբու, էջմիածին, 1873: Ղ. Ալիշան, Կամենից, Վենետիկ, 1896: Նույնի՝ Հայ-Վենետ, Վենետիկ, 1896: Հովհ. Անեցի (Գովրիկյան), Միքիլի և Ճորճովի հայ գաղթականությունը, «Հանդես ամսօրյա», 1896, № 1—6: «Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները», Երևան, 1963: «Դատաստանագիրք Ասորախանի հայոց», Երևան, 1967: Հ. Հորդանանյան, Նետրականական արևելյան Հնդկաստանի հայ դադութի պատմություն, Երուսաղեմ, 1937: Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963: Կ. Ղաֆադարյան, Երևանի միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Երևան, 1975: Նույնի՝ Հաղբատ..., Երևան, 1963: Նույնի՝ Հովհաննավանք..., Երևան, 1948: Նույնի՝ Սանահին վանքը..., Երևան, 1957: Ուղուրլյան, Պատմություն հայոց գաղթականության իրվոնո, Վենետիկ..., 1891: Գ. Գովրիկյան, Հայք լծղիսարեթուպոլիս Դրանսիվանիո, Ա—Գ, 1893—1904: Հ. Աբրահամյան, Կալվածագրեր, Երևան, 1941: «ԺԴ դարի հայերեն ձևագրերի հիշատակարաններ», Երևան, 1950: Մ. Օրմանյան, Աղղապատում, Կ. Պոլիս, 1913—14: «Բանքեր Մատենադարանի» և «Բանքեր Հայաստանի արխիվներին» հասարկություն լույս տեսած բոլոր վավերագրերը: Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հհ. 1—5, Երևան, 1942—1962:

⁵ Բանաձևի անդամների համար ընդունում ենք հետևյալ նշանակումները. Ա—անձնանուն՝ մարդանվան տեսակ, տրվում է անհատին ծնվելիս: Հ—հայրանուն, մարդանվան տեսակ, ածանցվում է անհատի հոր անձնանունից: Ազ—ազգանուն, մարդանվան տեսակ, ժառանգաբար անցնող պաշտոնական անվանում: ՏՀ—տոհմանուն, մարդանվան տեսակ, անցնում է

Հանդիպում է նաև Ա+Տղ (-ացի, -եցի, -ցի, օրինակ՝ Ստեփանոս Ուլնեցի) ձևը։ Նշվածների մեջ Հետաքրքրություն են ներկայացնում Արտոյտ, Մարախ անձնանունները, որոնք, անկասկած, վկայում են հեթանոսական կենդանի սովանդությունների մասին, մի բան, որ զարմանալի չէ IV դարի կեսերի համար։ Հետագա դարերում կենդանիների անուններից անձնանուն կազմելը խորթ է եղել Հայկական սովանդության համար։ Այս շրջանում հայերի անվանման բանաձևերը և հատկապես նրանց բաղադրիչների կառուցվածքը այնպիսի առանձնահատկություններ են հանդես բերում, որոնք նշում են անունների համակարգի հետագա դարերի զարգացման միտումները։ Այսպես, զավակների անձնանունները սերում են հոր անձնանունից՝ -եան, -դուխտ, -ուհի, -ենի, -անուշ ածանցների օգնությամբ. «Արդ ուրեմն վերստին կամի Համաղասպեան... դՀամաղասպուհի գըրյրն իւր տալ սմա կնութեան»⁶, ինչպես նաև Վարդէնի, Վարդանուհի, Վարդանուշ և այլն, որոնցից -ուհի-ով և -անուշ-ով կաղապարները հետագա դարերում մեծ արգասավորություն են ցուցաբերում։

Սմբատ > Բատ, Մամիկոն > Կոն, Բակ, Արսեն > Արշե, ինչպես նաև Դրստ-րիկ, Զուրիկ, Շուշանիկ, Թաթիկ ձևերը օգնում են գտնելու ժողովրդախոսակցական լեզվին այնքան հատուկ և հենց այդ ճանապարհով ազգանունների մեջ թափանցած անձնանունների նման տարբերակների առաջացման սկզբները։ Այլևիկ ու շրջանում երևում են երկանդամ բանաձևերում երկրորդ բաղադրիչի՝ -եան-ով կազմության դեպքեր՝ Ապիրատ Հասանեան, Թոռնիկ Մուշեղեան, Գաղիկ Գուրգենեան, Վասակ Ապիրատեան, Վասիլ Ապուքապեան, Դաւիթ Թոռնիկեան և այլն։ Այստեղ մենք գործ ունենք հայրանուններից ստեղծված նորակազմությունների հետ, քանի որ Թոռնիկ Մուշեղեանը հայտնի է նաև Թոռնիկ Մամիկոնեան որդի Մուշեղայ, իսկ Գաղիկ Գուրգենեանը՝ նաև Գաղիկ Արծրունի որդի Գուրգեն-Խաչիկի բանաձևով։ Ի դեպ, ինչպես Գուրգեն-Խաչիկ, այնպես էլ Սմբատ-Հովհաննես, Աբուսահլ-Համաղասպ, Աշոտ-Գաղիկ, Աշոտ-Սահակ, Գաղիկ-Խաչիկ, Սենեքերիմ-Հովհաննես, Վասակ-Սահակ և այլ օրինակները ցույց են տալիս, որ միջնադարի հայ իշխանական տներում կրկնակ անձնանուն գործածելու սովորություն է եղել, որը, սակայն 3—4 դարի կյանք ունեցավ։

Միջնադարը ուշագրավ է նաև մականունների առումով։ Հայտնի են Շնորհալի մականունով մի քանի գործիչներ՝ Ներսես, Իգնատիոս, Սարգիս, Բարսեղ։ Այդ տիտղոսը ստանում էին Քեսունի Կարմիր վանքի աշակերտները, այնպես, ինչպես Սյունյաց դպրոցի աշակերտները ստանում էին Քերթոզ, իսկ Արագածոտնի դպրոցի սաները՝ Իմաստասեր տիտղոսը։

Ինչպես նշվեց, հոգևորականների անվանման բանաձևերը զգալի փոփոխությունների չեն ենթարկվում, սակայն բաղադրիչների էությունը նկատելի տարբերություններ է հանդես բերում՝ Գևորգ Մեղրիկ, Նրեմիա Անձրեիկ, Սարգիս Կոնդ և այլն։ Սակայն չպետք է մոռանալ, որ բերված օրինակները վերաբերում են եկեղեցու ցածր պաշտոնյաներին, որոնք աչքի են ընկնում

սերնդից սերունդ, երբեմն նման է ազգանվանը (օր.՝ Մամիկոնյան), սակայն ծագումնաբանորեն տարբերվում է վերջինից։ Տղ—տեղանուն, անունների մի կարգ, որով նշվում է ցանկացած աշխարհագրական օբյեկտ։ Մկ—մականուն, մարդանվան տեսակ, շրջապատողների կողմից տրվում է անհատին, իբրև լրացուցիչ անձնանուն՝ ելնելով նրան բնորոշ առանձնահատկություններից։ Ն—նումեն (տե՛ս ծան. 2)։

6 «Փաստոսի Բուկանդացույ Պատմութիւն Հայոց», Ս. Պետերբուրգ, 1883, էջ 205։

հարաբերական ազատությունը, մինչդեռ, օրինակ, Հոռմկլայի ժողովին մասնակցած եպիսկոպոսների մեծ մասի անվանման բանաձևերը կազմված են Ա+Տ դ բաղադրիչներից՝ Բարսեղ Անույ, Բասիլոս Տփղիսի, Ղազար Հեր և Զարեանցի: Այս նույն շրջանում ցածր խավի մի քանի ներկայացուցիչների ենք հանդիպում՝ Սարգիս Ծիլենց բաժրար, Խաչատուր, Լոռբեն ծառա որդի Դավթի թոռն Յոհանու (գեղջուկ է, վանքին ձիթհանք է նվիրել և, ինչպես ընդունված է նվիրատվության արձանագրություններում, նրա անվանման բանաձևը այս խավին ոչ բնորոշ ընդարձակություն ունի), Ստեփան գծող, Մխիթար հյուսն, Յուսեփ քաղաքացի, Իւան աւագ քաղաքացի, կազմող Սհակ, գրիչ Շապուհ, Աբրահամ ծերունի, Վահրամ ծայր (ծեր), Շաշ Միակեց, Շնոհոր աղբար բարգործ, Կոնստանդին Կատուկեցի Պրօնագործ, Դավիթ ջրաղացպան: Ինչպես նշում է Օրմանյանը, երբ վերջինս հայտնի դարձավ իր գործերով, փոխվեց նաև նրա անվանման բանաձևը՝ Դավիթ Ծարեցի: Ուշադրություն է գրավում նաև ֆաղափացի նոմենը, որ հանդիպում է Հաղբատի և Սանահնի վանքերի արձանագրություններում: Պարզվում է, որ այդ բաղադրիչը կարող էին ստանալ Թիֆլիսից եկած կամ այդ քաղաքի հետ կապ ունեցող անձինք: Ընդ որում, այդ նոմենը այնքան տարածված է եղել, որ բարձրացել է ազգանվան մակարդակի՝ Քաղկցյան: Աչքի են ընկնում բանաձևերի կառուցվածքի առանձին բաղադրիչների մեջ հանդես եկող շեղումները ընդունված կանոնից՝ Սարգիս պատանեկ, զիւգակից Գրիգորոյ, աղվոր Շահ, Թոքակերորդի, Խաթենց, Հոնենց, Սմբատենց, Անդրիասենց և այլն: Առանձնապես ուշագրավ են «ենց»-ով կազմությունները, իբրև նոր երևույթ հայկական մարդանունների շարքում, որը բավականին անաղարտ պահպանվել է մինչև օրս՝ գերդաստանի անունը նշելու համար, իսկ հատկապես Սյունիքում, ինչպես գիտենք, այն բարձրացավ ազգանվան աստիճանի: Մի այլ ուշագրավ առանձնահատկություն է. նկատի ունենք լայն տարածում գտած Ա որդի Հյ բնաձևին թոռն+պապանուն բաղադրիչի ավելացումը՝ Ճար որդի պատրոն Ումեկին թոռն Ճարին, Սաթ թոռն Սմպատա որդի Արտաւազա, Սինաքերիմ թոռն աւագ Սենաքերիմա և այլն: Որոշ դեպքերում պարզապես միայն պապանունն է վկայվում՝ Վասակ իշխան թոռն Կուտկանին, Խորիշահ թոռն մեծին Վաչէի, Գոհարմելիք թոռն Համազասպանց, Գրիգոր թոռն Խաչէնիսենց: Արդեն նշել ենք, որ այս վերջին ձևերը բարձրանում են գերդաստանի անվան մակարդակի, որի օգտին է խոսում նաև այն փաստը, որ երբեմն թոռն նոմենին փոխարինելու է զալիս ազգ բառի եզակի բացառականի ձևը՝ յազգէ: Օրինակ՝ Համիկ որդի Սմբատայ յազգէ Համազասպանց, Արուս խաթուն յազգէ Ուքանանց: Քիչ ավելի ուշ հանդիպում են երկանդամ բանաձևեր Ա+Տհ (-ենց/-անց), ուր իբրև երկրորդ բաղադրիչ ունենք պարզապես գերդաստանի անուններ՝ Վահրամ Կուղնանց, Մամիկոնանց Ուքան, Մուծկանց Գրիգոր, Աբել, Առաքել, Փէճուրանց Մխիթար և այլն:

Ոչ միայն պապանվան ներմուծումն է անվանման բանաձևի մեջ ուշադրություն գրավում, այլև հայրանունը, որ ձևավորվում է խոսակցական լեզվին խիստ հատուկ «ի» հոլովմամբ՝ Սամոն որդի Հովհաննէսի տէր Սամուիլի, ...որդի տէր Աւրպէլի Ումանէսի: Ըստ որում տարբերությունը հատկապես ընդգծվում է այն պատճառով, որ բանաձևի քննվող բաղադրիչից առաջ բացակայում է որդի նոմենը: Ավելացնենք նաև, որ այսօր էլ գյուղական վայրերում խիստ ընդունված է Գեորգի Վարդանը, Սմբատի Արտաշը ձևերով մարդկանց կոչելու սովորությունը:

Ասվածից դժվար չէ եզրակացնել, որ մարդանունների համակարգում դարդացման այս շրջանում առկա է հայրանունների ձևավորման երկու ձև՝ -եան-ով և -ի-ով, որոնք ղուգահեռաբար կիրառվում են մինչև XIX դարը. երբ որոշ, շատ կարճ ժամանակ, գործում էր -եան-ով տարբերակը, իսկ սկսած այդ դարի 80—90-ական թթ. գերակշռողը դառնում է -ի-ով ձևը և ապա՝ վերջնականապես հաղթանակում:

Բանաձևի վրա ժողովրդախոսակցական լեզվի ազդեցությամբ պետք է բացատրել նաև հետևյալ ձևերի երևան գալը՝ Ստեփան որդի Կարապետ աղին, Գրիգոր որդի Սմայատալ Ոստնի տէր, Տաիր Սարգսի որդի և այլն: Այս շրջանում ընդգծվում են ոչ միայն հայրանվան, այլև մարդանուններից ամենավերջինի ու կատարյալի՝ ազգանվան ղուգահեռ ձևերի ակունքները: XV դարում նկատելի են դառնում որոշ նորամուծություններ, որոնք, անկասկած, պատահական չեն և իրենց հիմքերն ունեն նախորդ դարերում: Ի նկատի ունենք անվանման բանաձևի մեջ -եանց ածանցով կազմված տոհմանվան երևան գալը՝ Գրիգոր Մուսաբեդեանց, Մկրտիչ Ողբեկենց նաև Օղուլբեգեանց, Մկրտիչ Նահապետեանց, Գրիգոր Զալալբեգեանց կամ Մակուցի, Գրիգոր Աթաբեկեանց և այլն: Բնականաբար այս շրջանում, իսկ ավելի ճիշտ ընդհուպ մինչև XIX դարի 30-ական թթ. այդպես էլ լայն տարածում չգտան, ունենալով բավականին սահմանափակ կիրառություն: Սակայն այստեղ ավելի կարևոր է այն հանգամանքը, որ երբ XIX դարի սկզբներին Արևելյան Հայաստանում եռանդամ բանաձևի ընդունման սկիզբն էր դրվում, ապա պատրաստի վիճակում ավանդված էին և՛ հայրանվան, և՛ ազգանվան կադապարներ:

Նյութի առատությունը և բազմադանությունը առանձնահատուկ տեղ է դբադեցնում XVII դարը: Հետաքրքրական փաստեր են ընձեռում հատկապես զաղթօջախները: Բացի այդ, նշված ժամանակահատվածը աչքի է ընկնում հոգևորականության մոտ նկատվող աննախադեպ ավանդախախտությամբ. Ահա մի քանի օրինակ՝ Կարապետ Զագ վարդապետ, Հովհ. Խուլ եպիսկոպոս, Հովհ. Թյությունճի, Կրպո Ռաբուն, Մինաս Եվդոկիացի Զիլիֆտարօղլու, Մինաս Կարենցի Քացախ, Հովհ. Պոլսեցի Նոխուսճի, Մխիթար եպիս. Մոկաշ Լալուակ Մխո, Ներսես վարդապետ Բեղլու և այլն: Ըստ որում, եթե բերվող օրինակներից քիչ թե շատ տարակուսանք չի առաջացնում քահանաների և վարդապետների անունների ավանդախախտությունը, ապա եպիսկոպոսների և կաթողիկոսների անվանման բանաձևերում նման երևույթները աննկատ մնալ չեն կարող: Հիշենք թեև Մինաս Կարենցի Քացախ և Հովհ. Թյությունճի կաթողիկոսներին և Հովհ. Պոլսեցի Նոխուսճի (սիսեռակեր) պատրիարքին: Անսովոր են նաև Կրպո, Մխո կոչական տարբերակները:

Շնորհիվ մի քանի աղբյուրների և հատկապես դրանցից երկուսի⁷, հնարավոր է դառնում բավականին մանրամասն ներկայացնել աշխատավորական խավերի անվանման բանաձևերը: Այդ դեպքում ևս գերակշռողը Հյ-ձորդի-Ա. եռանդամ բանաձևն է՝ Թումի որդի Զաքար, Աստատի ուղի Խաչիկ և այլն: Բաղադրիչների քանակը և որդի նոմենի առկայությունը, կարծեք թե վկայում են, որ բանաձևը անաղարտ է մնացել, սակայն փոփոխությունը ղգալի է՝ փոխվել է բանաձևի հիմնական անդամների շարադասությունը և նախորդ

7 Հ. Արրահամյան, նշմ. աշխ. Կ. Ղաֆադարյան, Երևանի միջնադարյան հուշարձանները:

դարերի հաշիվ որդի Աստատի դիմաց ունենք Աստատի որդի հաշիվ և այլն: Ավելին, որդի նոմենը փոխարինվում է հոմանիշով՝ Աստատի տղա Սարքիս. Շեթի տղա Թորոս և այլն: Այս շրջանի արտահայտություն է նաև, այսպես կոչված բանաձևի ծավալուն տարբերակը՝ Աբրահամ որ է որդի էվազի, Խոսրովիդուխտ որ է դուստր Ագուլեցի խոճա Ղուլուն: Երբեմն անվանման բանաձևի մեջ որդի, դուստր՝ նոմեններին զուգահեռ գործածվում են կողակից, որ է բաժին ձևերը, որոնք, բնականաբար, ազգակցական այլ հարաբերության կրողներ են, օրինակ՝ Փանոսի կողակից Հուրիսան, Աշխատող Ղարիպ որ է բաժին Թումանին, Ըսպահանյ էրեւանցի Նիկողոսի վելիխան և այլն:

Եթե ոչ նախորդ բանաձևերից ավելի, ապա հավասար տարածում ունի ՏՀ (-նց/ -ունց) + Ա բանաձևը՝ Քարենց Զաքար, Ֆարմանենց Հերապետ, Դովաթ հօջենց Նազար, Կրտանենց Յակոբ, Բաբամենց Մարգարե, Զաղարենց, Ումիտենց, Ներկարարենց, Շօքենց, Շէթենց և այլն:

Աշխատավորական խավի ներկայացուցիչների անվանման բանաձևերի կազմության մեջ նկատվում են նաև հետևյալ երևույթները. անձանվանը նախորդում է տեղանվանական ծագում ունեցող բաղադրիչ՝ Արտավելցի Մանուկ, Աստապատեցի Միքայել, Զուլալեցի Սրապիոն, Սպահանեցի Միթաթ, Տփիսեցի Գրիգոր, Սէրկէվեցի Յենկիպար, Գոմերկցի Սուլմոն: Բանաձևի կազմում հանդիպում են նաև զբաղմունքի հետ կապված զանազան նոմեններ՝ ուստա Գրիգոր, Միրիջան, Աւաք, վարպետ Մարգար, նալբանդ Յակոբ, նավավար հաշիվ, չիթչի Փիլիպոս, դարպինդ Մկրտիչ, արազ Վարդան, մաղագործ Բայրամ, զուռնաչի Հակոբ, ներկարար Երամ և հենց նույն շրջանում՝ ներկարարենց էվան, Դարփինտենց Շահվերտի և այլն:

Զգալի տարածում ունեն մականվանական ծագում ունեցող տոհմանունները՝ Մուլիկենց Ատոմ, Քաշալենց Իսրայել, Բեզլվենց Սրիպոն, Խնէնց, Անմոռէնց և այլն: Իսկ անվանման բանաձևի համար այս շրջանում ամենահատկանշականն այն է, որ գրեթե բոլոր բաղադրիչները ներկայանում են իբրև գրականի ժողովրդախոսակցական տարբերակներ՝ Ֆռանկուլենց Արուիին, Ուսուփի որդի..., Ֆարմանենց Հէրապետ, Անդրիազի որդի Սուքիազ և Ընդրիասի որդի..., Աստատրի որդի..., Սիամոնի որդի Մուքել և այլն:

Հայկական առաջին գաղթօջախները, որ սկսեցին ձևավորվել Անիի թագավորության անկումից հետո, XIV—XVI դդ. զգալի ծաղկում ապրեցին: Այդ գաղթօջախների նշանակալից ներդրումը առևտրի և արհեստների բնագավառում հնարավորություն տվեց տեղի հայերին ինքնավարման զգալի իրավունքներ ձեռք բերել: Թերևս այդ է պատճառը, որ հայերը մի քանի դար պահպանում էին իրենց ազգային ինքնուրույնությունը, որ, անկասկած, պետք է երեվար նաև անվանման բանաձևերի մեջ: Սխալ կլիներ կարծել, թե XVII դարում, երբ հայերը արդեն 3—5 դար ապրել էին օտար միջավայրում, այդ միջավայրի ազդեցությունը չպետք է կրած լինեին: Ընդհակառակը, ազդեցությունը զգալի է, բայց նկատելի է նաև հայկական նշանակալից տարրը:

Վենետիկի հայերի անվանման բանաձևերը, ինչպես վկայված է Ալիշանի մոտ, իրենցից ներկայացնում են բնիկ հայկականի և տեղականի զուգակցում: Վերջինս ավելի նկատելի է սկսած XVI դարից: Այսպես, հանդիպում են հետևյալ բանաձևերը՝ Գեորգ որդի Յովհաննու, Մարտիրոս որդի Պետրոսի, Գեորգ որդի Յակոբայ և Ալեքսանդր Սիմոն, Պետրոս Ոսկան, Մկրտիչ Պարսկահայ, Գեորգ Գոթլիխոյ: Անկասկած վերջին խումբը տեղական պայմանների ազդեցության, դրանց հարմարվելու վկայություն է: Նկատելի է նաև հետևյալ ընդհանուր երևույթը. անվանման բանաձևերի մեջ հաճախ են օգտագործվում

Հայ, Պարսկահայ, Սուրեան բաղադրիչները: Ըստ որում վերջինիս մասին Ալիշանը նշում է, որ այն չպետք է կապել Սիրիայի հետ, քանի որ իտալացիները Արևելքից ներգաղթածներին այդպիսի մի ընդհանուր անվանում էին տալիս⁸: Ահա մի քանի օրինակ՝ Ղաղար Պարսկահայ, Խաչատուր Հայ (Դավորիժեցի), Գեորգ որդի Հայույն Յովսեփայ: Վկայվում են նաև Հյ+որդի+Ա բանաձևով անուններ՝ Գաբրիելի որդի Կիրակոս, Աղաճանի որդի Գեորգ, Հով-աննիսի որդի Ճանիբեկ-և այլն:

Ավելացնենք նաև, որ անձնանունների մեջ ևս տեղական ազդեցության հետքեր են տեսնում՝ Ֆրանչեսկո-Մատթեոս Անտոն (Անտոն Սուրեան Հայի թոռներից), Դոմինիկա, Պավլա, Չեչիլիա, ինչպես նաև կրկնակ անձնանունների օգտագործումը՝ Ստեփանոս-Պետրոս, Սիմոն-Յակովբ: Այս դարում վենետիկահայության անվանման բանաձևերի մեջ երևում են երկբաղադրիչ կալմություններ, որոնցից երկրորդը ձևավորված է -եան ածանցով, իսկ հիմքը Լնթադրում ենք, որ պետք է հայրանունը լինի՝ Հակոբ Գալուստեան (Մեղապարտ), Աթանաս եպ. Աբրահամեան, Վարդան Յովնանեան (բոլորն էլ հոգևորականներ):

Աղդեցիկ ու մեծ է եղել Լիվոռնոյի գաղութը, թերևս այդ պատճառով բավականին երկար է գոյատևել, հասնելով մինչև XX դարի սկզբները: Ասվածը ապացուցվում է նաև այն բանով, որ Լիվոռնոյի հայերի անվանման բանաձևերը և՛ նախորդի համեմատությամբ, և՛ ընդհանրապես երկար ժամանակ պահպանել են ազգային նկարագրեր: Անվանման բանաձևերի առաջին վկայություններին հանդիպում ենք XVII դարում: Ըստ որում դրանց տեղանվանական բաղադրիչների օգնությամբ կարելի է պարզել, թե հայկական ո՞ր վայրերի հաշվին է ձևավորվել այդ գաղութը՝ Սսեցի խոճա Սաֆար. Կեսարացի խոճա Փանոս Պոլսեցեան, Գաղատցի Հակոբ Չէլչյի որդի խոճա Պայրամշահի, Եվրոկացի խոճա Ալեքսան որդի խոճա Ղազարի, Զմիռնիացի խոճա Սարգիս որդի խոճա Պողոսի, Զուղայեցի Մանուէլ հոգևոր որդի Հայրապետի, Ղափանցի մահտեսի Պողոս որդի անաջողակ Ծատուրին, Դաստակեցի խոճա որդի Պաղտուրի և այլն:

Ընդհանրապես վկայված բանաձևերը գալիս են ասելու, որ Լիվոռնոյի հայերի համար (առանձնապես անվանի հայերի) անվանման բանաձևերի կալմության բավականին հաստատուն եղանակ կար՝ Ա+Հյ (-եանց). օրինակ՝ Պետրոս Փանոսեանց, Թովմաս Ամիրզատեանց, Սուլթանում Յովհաննիսեանց, Հովանճան Սարգիսեանց, Թովմաս Բարթողիմեանց և այլն, թվով ավելի քան հինգ տասնյակ: Ըստ որում վերջինիս հայրը կոչվում էր Բարթողիմեոս Մանուէլեանց: Այդ փաստը մեզ իրավունք է տալիս պնդելու, որ վերոհիշյալ կաղապարում -եանց ածանցը ավելանում էր հայրանուններին: Բերվածներին զուգահեռ կիրառելի են նաև ավելի ընդարձակ կաղապարներ՝ Կեսարացի խոճա Պուտակ Գաթրճեանց, Կեսարացի խոճա Փանոս Աբելենց, Գրիգոր Կիրաբ-Միրման և այլն: Իտալահայ գաղթօջախն ընդհանրապես և Լիվոռնոյի հայությունը մասնավորապես աչքի է ընկել նշանակալի ավանդապահությամբ:

Արևելյան Եվրոպայի հայկական գաղթօջախները մի քանի դարի պատմություն ունեն, ուր առանձնապես աչքի են ընկել Տրանսիլվանիայի, Լեհաստանի, Հունգարիայի և Ուկրաինայի գաղթավայրերը:

⁸ Այստեղ կարելի է հիշել մի այլ համանման փաստ՝ Թուրքիայում Պարսկաստանից եկածներին կոչում էին աջամներ: Այստեղից էլ հայկական Աջամյան (Աճեմյան) ազգանունը:

Արևմտյան Ուկրաինայում հայկական կյանքը առանձնապես ծաղկում էր լվովում և Կամենեց-Պոդոլսկում: XVII դարի վերջերին գաղթօջախի վերնախավը ամեն կերպ աշխատում էր խափանել դրսից եկող հայերի ներգաղթը, որին նպաստում էր նաև լատինասեր հոգևորականների գործունեությունը: Գաղթօջախը կորցնում էր ազգային ինքնատիպությունը և աստիճանաբար ձուլվում լեհերի (մեծ քաղաքներում) և ուկրաինացիների (ավելի փոքր բնակավայրերում) հետ: Զուգումը իր հետևանքներն ունեցավ նաև տեղացիների համար: Ուկրաինացիների մոտ այդ շրջանում զգալի տարածում ստացան իվան, Ավեդիկ, Թորոս (որից և Տարաս) և նման անձնանունները: Ըստ որոշ կարծիքների, դա հայկական տարրի ազդեցության հետևանք էր⁹: Եվ, չնայած լավատեսությանը, նույնիսկ XVII դարում անվանման հայկական բանաձևերի մասին պետք է խոսել զգալի վերապահությամբ, քանի որ գործ ունենք բուն տեղական բանաձևերի հետ, որոնք հայկական են համարվում կամ այն պատճառով, որ բաղադրիչների հիմքերը հայկական են և կամ էլ այն պատճառով, որ աղբյուրները վկայում են այդ անունները կրողների հայ լինելու մասին: Ներկայացված բոլոր բանաձևերը երկանդամ են, կազմված Ա+հիմք (-ովիչ) կաղապարով: Բանաձևի առաջին բաղադրիչը ներկայանում է հետևյալ տարբերակներով՝ 1. հայկական՝ Ավեդիկ, Գաբրիել, Թորոս, Սիմոն, 2. նախորդի հնչյունափոխված ձևեր՝ Հրեհոր, Ասվադուր, Շիմոն, Լազար և 3. զուտ տեղական ձևեր, որ առաջացել են հայկական ձևերից հետագա պատճենմամբ կամ արդյունք են տեղական ազդեցության՝ Անջեյ, Գժեզոժ, Կժիշտոֆ, Զախարիա, Իվաշկո, Զախնո, Եժի, Յան, Միկոլայ և այլն:

Բանաձևերի երկրորդ բաղադրիչը, ինչպես և պետք էր սպասել, ժառանգաբար անցնելու կամ պապանունից կազմվելու շնորհիվ ավելի պահպանողական դժեր է հանդես բերում: Նորից ընդգծենք, որ խոսքը երկրորդ բաղադրիչի հիմքերի մասին է, քանի որ բոլոր դեպքերում անունակազմական ածանցը նույնն է՝ -ովիչ: Ահա մի քանի օրինակ՝ Ավեդիկովիչ, Զադիկովիչ, Թորոսովիչ, Վարդանովիչ, Մուրադովիչ, Կասպարովիչ, Կիևորովիչ, Վարդերիշովիչ, Դերկասպարովիչ, Ներսեսովիչ, Նորեշովիչ, Օվանիսովիչ, Բոգոսովիչ, Մինյայովիչ և սրանց կողքին՝ Գոլոբովիչ, Բերնատովիչ, Յակուբովիչ, Կժիշտոֆովիչ, Յուզեֆովիչ, Տոբիաշովիչ, Յարոշովիչ, Նիկոլայովիչ, Ստեցկովիչ, Ավգուստինովիչ և այլն:

Հետաքրքիր ենթահամակարգ են կազմում նաև Եվրոպայում, հատկապես Ռուսաստանում հայտնված հայերի անվանման բանաձևերը: Այս փաստերը հետաքրքիր են նախ այն պատճառով, որ վեր են հանում հայկական բանաձևերի հնարավոր տարբերակները այլ լեզվական միջավայրերում և ցույց են տալիս այդ տարբերակների ազդեցության հնարավորությունը արդեն ձևավորվող բանաձևերի վրա:

Ռուսական միջավայրում հայտնված հայերի անվանման մեջ առաջին հերթին աչքի է ընկնում տեղանվանական հիմքով կաղապարությունների բացակայությունը և սա պատահական չէ, քանի որ ռուսական անունների համակարգում տեղանունները շատ քիչ դեր են խաղացել: Ասվածը հաստատվում է նաև այսօրվա ռուսական ազգանունների օրինակով, ուր այդպիսի հիմքով կաղապարությունները բավականին փոքրաթիվ են: Հանդիպում են բնիկ հայկական ձևեր՝ Աստվածատուր Միրիթենց, Պստիկ ադա Շահի Խասենց, Մարդալ Շահ-րիմանենց և այլն: Բերվածների կողքին կան ռուսերեն տառադարձության ժա-

⁹ «Украинско-армянские связи в XVIII в.», Киев, 1969, с. 11.

մանակ կատարված սխալների հետևանքով առաջացած տարբերակներ, որոնք արդյունք են նաև բանավոր խոսքից կատարված գրառման՝ Օսկան Զախրունց, Ուսեփ Նանենց, Ուհանես Ասկանդարով, Արաբետ (նաև Խարաբետ) Մատվեն, Ուհան Րմանով, Կաղար Կալյուստով (Կիրիլով), Արյուսյոկով (Արետուկով) Սարգիս և այլն: Մի այլ խումբ են կազմում բանաձևերի բաղադրիչները: տեղական պալմաններին հարմարեցված տարբերակները՝ օր. Ավանեսով Սարգիս մի այլ տեղ գրվում է Կիրիլկո Օվանեսով և Սարկիսկո Ուվանեսով, Իվան Այիխանով, Գրիգորե, Գրեղենց, Պյոտր և Բոգդան Ամիրեվ, Կասպար (Կասսյեր, Կաշպարկո) Անդրեև, Բագդասարկա Իլյին, Սաֆարկա Վասիլև, Գրիշկա Արիտունկո, Ալավերդեյկա, Իվանիսկա, Մնացականկա և այլն: Ըստ որում նման ձևերը մեծ թիվ են կազմում: Ինչպես ցույց են տալիս ռուս անունագետները, ռուսական ավանդույթը նման ձևեր հատկացնում էր հասարակության շրջանոր, ստորին խավերին: Դրա լավագույն ապացույցը կարող է լինել այն, որ արդեն հիշատակված սյառհանցի վաճառականների անվանման բանաձևավորում նման տարբերակների շնք հանդիպում: Ընդհակառակը, այս դեպքում սյառհանցի են նրանց տոհմանունները՝ Շահրիմանենց, Շահխաթունենց, Միրիթենց, Լուսիկենց, Նանենց և այլն: Մյուս դեպքերում անվանման երկրորդ բաղադրիչը կազմվում է -ՕՅ/-ԵՅ ածանցների օգնությամբ՝ Սարկիս Ավանեսով, Յակով, Ավդեև, Կասպար Ավագով, Արետիսկո Գրիգորև, Դավիթ Բագրամով, Բուզուս Ուդանով, Առաքել (Ռաքել) Պետրով և այլն:

Տրանսիլվանիայում և հատկապես Գեռլա կամ Արմենվարոշ և Եղիսաբեթուպոլիս քաղաքներում հաստատված հայերի ազգային նկարագրի անադարտություն մասին են վկայում նաև անվանման բանաձևերը, որոնք մեծ մասամբ երկանդամ են: Զգալի թիվ են կազմում նաև եռանդամները: Իբրև բացառություն ներկայացված են մի քանի քառանդամ և հնգանդամ բանաձևեր:

Երկանդամ բանաձևերը կազմվում են հետևյալ բաղադրիչներից.

1. Ա+Հյ (-ի)—Գրիգոր Ներսեսի, Կաշբար Մելքոնի, Խաչերես Գրեշունի, Մանուկ Ասլանի, Նիկոլ Վարդիկի և այլն:

2. Ա+Տղ (-ի)—Դավիթ Շոմլցի, Ասվատուր Մետիաշցու, Պապիկ Մետիցի և այլն:

3. Ա+ն (ղբաղմունքի անուն)—Ասվատուր Կոշկարի, Օվանես Ռուբլի, Սաղոյ Դրասդաճու, Դոտերաշ Ոսգերիլ:

Հետաքրքիրն այն է, որ ներկայացված երեք դեպքերում էլ իբրև երկրորդ բաղադրիչ օգտագործված է հայրանունը, որ դրված է սեռական հոլովով՝ մի դեպքում վերցված է նրա անձնանունը, մյուս դեպքում՝ ծննդավայրը կամ մոտ նշանակությամբ մի այլ տեղանուն և երրորդ դեպքում՝ զբաղմունքի անունը և պատահական չէ, որ արդեն XVIII դարի երկրորդ կեսից սկսած թվարկված բաղադրիչները անցնում են մարդանունների ավելի բարձր տոհմական կարգին, ազգանուն դառնալու հետագա միտումով՝ Ղազար Օհանեսանց, Լուսիկ Ոսգերիլեանց, Դոտեր Վարդիկեանց, Մելքոն Կաշբարեանց, Նիկոլ Զիրախեանց և այլն: Բայց վերջիններիս կողքին դեռևս մեծ թիվ են կազմում Տոնիկ Նիկոլի, Անտո Խաչոյի, Մարտիրոս Տոնիկի, Օվանես Նորսեսի, Սահկ Օհանի ձևերը: Երկանդամ բանաձևերից հիշենք նաև Ա+Մկ՝ Խաչիկ էրկան, Նիկոլ կոլորիկ:

Այս համայնքի սահմաններում եռանդամ բանաձևերը, անկասկած, երկանդամների հետագա զարգացումն են և ավելի ուշ շրջանի արդյունք: Իսկ եթե մինչ այդ եղել են եռանդամ բանաձևեր, ապա երկրորդ բաղադրիչը ավելի

շատ վերաբերել է հայրանվանը կամ ներկայացրել է հորը: Այսպես, օրինակ, Ակոբբայ Սհակի Ազոնց, խաչատուր խաչիկի Մամու, Լուգալ Ըստեփանի Պապանց և այլ դեպքերում, մեր կարծիքով, երրորդ բաղադրիչը ավելի շատ երկրորդի հետ է կապվում, քան առաջինի: Նման եզրակացություն անելուն նպաստում է նաև դրանց արտաքին ձևական կողմը՝ -ոնց (-անց) -եսնց, որը անկասկած պատճառաբանված է, այլապես զուգահեռ ձևերը չեն արդարացվում: Հիշենք նաև, որ հետազայում սրանցից երկրորդը հաղթանակեց: Սակայն, անկասկած, սրանք այն անցման ձևերն էին, որոնք երկբաղադրիչներից հանդեցրին եռաբաղադրիչի այս շրջանի համար ամենազարգացած ձևին՝ Ա. Հյ. գերչաստանի անուն, իբրև անհատին ներկայացնող այսօրվա եռաբաղադրիչ բանաձևի նախատիպ: Բերենք մի քանի օրինակ՝ Մարտիրոս Մանուկի Իսիգուցեանց, Գրիգոր Աբրահամի Խօնթիքարեանց, Վարդան Լուսիկի Խասուեանց, Սիմոն Խաչերեսի Գաբեպուվեանց, Լուսիկ Վարդերեսի Զադրիկեանց, Գրիգոր Օվանեսի Դրուչիկեանց և այլն:

Բանաձևի բաղադրիչները աչքի են ընկնում ազգային ավանդույթի նկատմամբ հարազատությամբ: Արդեն նշվեցին զուտ հայկական այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ հայրանվան կազմությունը սեռականի -ի-ով և ու-ով՝ Լուսիկ Ղազարի և Սագոյ Դրաստաշու: Ավելացնենք նաև տոհմանունների կազմության նորից զուտ ազգային ձևը՝ Թորոսեանց, Շիմիլովցունց, Օսգերիչեանց և այլն:

Բաղադրիչները քննելիս անձնանունների շարքում հանդիպում են Լուսիկ, Խնկանոս, Սարգիս, Մելքոն, Օհան, Ասվատուր, Վարդան, Մանուկ, Մարտիրոս, Զատիկ, Վարդերես, Ծառուկ, Օվանես, Խաչիկ և այլն: Մեր քննած ավելի քան 150 դեպքերի մեջ նման անձնանունները կազմում էին մոտ 90 տոկոսը: Մնացած տեղը զբաղեցնում են հետևյալ օտար կամ օտարացված անձնանունները՝ Դօտեր, Զագարիաս, Իսայ, Խաչգոյ, Եագուպաշ, Մադեաշ, Լուգաշ, Ակսենտ, Դօտերաշ, Միգո, Անտրիաշ, Նիգուշ, Սիլվեստր, Նիկօլ: Մոտավորապես նույն համամասնությանն ենք հանդիպում տոհմանունների դեպքում: Ճնշող մեծամասնություն կազմող Զադիկեանց, Թորոսեանց, Օսգերիչեանց, Վարդիկեանց, Օհանեանց, Մխիթարեանց և այլ տոհմանունների կողքին երևում են Վիգոշեանց, Կաշերեանց, Տիագոնեսանց, Բդրաշգոյեանց և այլն:

Տրանսիլվանիայի մյուս հայաշատ քաղաքը՝ Գեռլան կամ Արմենվարոշը, նույնպես անվանման բանաձևերի հարցում բնութագրվում է հարազատությամբ ազգային ավանդույթին: Հանդիպում են -ի, -ենց, -եսն, -եսնց ածանցներով կազմված երկրորդ բաղադրիչներ՝ Գրիգոր Խաչիկի, Պոկտան Նուրիճանի, Ասվատուր Սագոեանց, Աբսենտիոս Վրդարեան, Գրիգոր Դոտերեանց, Խնկանոս Թորոսեան և այլն: Բաղադրիչները մեծ մասամբ հայացի են, բացառությամբ Աբսենտիոս և Պոկտան ձևերի: Կարծում ենք, որ այս դեպքում գործ ունենք Աստվածատուր > Բոգդան պատճենման հետ:

XVIII դարը և հատկապես նրա երկրորդ կեսը Աստրախանի հայկական գաղթօջախի ձևավորման ու ծաղկման շրջան պետք է համարել: «Շարունակ կրկնվող գաղթի և բնական աճի շնորհիվ Աստրախանի հայկական գաղութի հայ բնակչության թիվը XVIII դարի կեսերին՝ դարասկզբի համեմատությամբ, ավելացավ շուրջ 10 անգամ, և հասավ մոտ 2000-ի»¹⁰: Գաղութը ձևավորվում էր գլխավորապես Ղարաբաղից և Զանգեզուրից արտագաղթողների հաշվին:

¹⁰ «Դատաստանագիրք Աստրախանի հայոց», աշխատ. Ֆ. Դ. Պողոսյանի, Երևան, 1967, էջ ԺԲ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Աստրախանի հայությունը սկսվում էր անվանման բանաձևերի երկու տարբերակից՝ հայկական և ռուսական:

Լինդ որում անվանման բանաձևերի հայկական տարբերակը ձևավորվում է որդի (դի)¹¹ նոմենի օգնությամբ՝ Հերապետ որդի Աֆգանտիլի, Յավրի որդի Ավետիկի, ինչպես նաև՝ Սարգիս դի Յոհաննի, Պետրոս դի Վարդանի, Հարութիւն դի Դավիթի, Երեմիայ դի Հարութիւնի և այլն: Հանդիպում է նաև երկբաղադրիչ ալն բանաձևը, որի երկրորդ մասը կազմվում է -եան ածանցով՝ Լիդիադար Գրիգորեան, Հարութիւն Դավթեան, Գրիգոր Կանապանեան և այսքանը: Մեղ թվում է, որ անվանման նման բանաձևը կրելը որոշ արտոնության նշան է, քանի որ այդպես են ստորագրել զատավորը և Հարութիւն Դավթեանը, որոնք մի քանի անգամ իբրև զրազետ անձնավորություններ ստորագրել են ուրիշների փոխարեն ևս: Երևում են ռուսական ազդեցության նշաններ՝ Վարդան Պիբիկով, Հակոբջան Խալդարով, Հարութիւն Զաքարով, Զախար Դավիթով և այլն, ինչպես նաև խառը բանաձևեր՝ Յակոբ որդի Տեր-Ոսկանեանի, Ղևոնդ որդի Բունեաթով, Յակոբոս որդի Մնացական Թովթուշով:

Իերովոդ ցուցակի ուսումնասիրությունը մեղ հանգեցնում է այն եզրակացության, որ XVIII դարի II կեսի Աստրախանի հայության համար բնորոշը, կանոնականը Ա+դի+Հ բանաձևն է: Ասվածը հաստատելու են գալիս ոչ միայն թվային տվյալները, այլև այն, որ վերոհիշյալ զրազետ անձինք այլոց փոխարեն ստորագրելիս բերում են միայն այդ բանաձևը (ավելի քան 20 պիսյը):

Այդ շրջանի Աստրախանի հայերի անվանման ռուսական տարբերակը ոչնչով չի զանաղանվում ռուսների անվանման բանաձևերից, եթե հաշվի չառնենք բաղադրիչների հիմքերը՝ որոնք որոշակիորեն վկայում են կրողի ազգային պատկանելության մասին՝ Աթաբեկ Բազդասարով, Կևորկ Նիկիտին, Պոլոս Մոսեսով, Գուգաս Սազակով և այլն: Պետք է ենթադրել, որ Աստրախանի հայերը ներքին հարաբերությունների համար կրում էին անվանման բանաձևի հայկական տարբերակը, իսկ ավելի լայն ոլորտում՝ ռուսականը: Օրինակ, Բաբիջանի որդի Թաթեոս և Թաթեոս Բաբաջանով, Աթաբեկ դի Բազդասար և Աթաբեկ Բազդասարով և այլն:

Քանի որ արդեն խոսվեց այլալեզու միջավայրում հայերի անվանման բանաձևերի մասին, ուստի երևելի է ներկայացնենք Ռուսաստանում գործող հայերի անվանման բանաձևերը քննելով:

Ռուսական բանակի կազմի մեջ մտնող հայկական էսկադրոնի մարտիկներն ու աստիճանավորները, բնականաբար, պաշտոնական ցուցակներում զրանցվում էին այդ երկրում ընդունված անվանման բանաձևերին համապատասխան: Ահա մի քանի օրինակ՝ Яков Мирзаов, Иванис Цатуров, Турус Иванисов, Кеурк Гулласаров, Богдасар Макартичов, Костянт Таргулеов,

¹¹ Որդի>դի մեկնաբանության օգտին են խոսում հետևյալ փաստերը.

ա) ինչպես վկայված է, Աստրախանի հայերը զաղթել են Սլոնիբից, Եվրոպայի հետ ոչ մի կապ չեն ունեցել:

բ) Աստրախանը զուտ ասիական էր և մնացել էր այդպիսին:

գ) Ռուսաստանը ազդած լինել չէր կարող, քանի որ նման ավանդույթ ինքը ևս չուներ:

դ) Այդ նոմենին հաջորդող հայրանունը զրվում է սեռականով, այսինքն զատնում է հատկացուի, ինչպես և որդի նոմենի դեպքում:

Абет Мнацаканов, Эвум Мирзоев: նկատելի է, որ ինչպես բերվող, այնպես էլ մյուս դեպքերում, բանաձևի առանձին բաղադրիչները գրանցվել են կրողի հայտարարությամբ և կրում են այդ անունների ժողովրդախոսակցական տարբերակների կնիքը՝ Кеурж, Иванис, Турус և այլն: Իսկ երբ գրանցելիս ծանոթ բաղադրիչ է հանդիպում, ապա ձևով անմիջապես հարմարեցվում է տեղական պայմաններին՝ Բաղդասար > Богдасар:

Երկրորդ բաղադրիչները, առանց բացառության, ձևավորված են -ОВ ածանցի օգնությամբ և անկասկած հայրանուններ են, քանի որ ներկայացվող ժամանակաշրջանում, ինչպես Ռուսաստանում, այնպես էլ հայերի մոտ (համենայն դեպս Արևելյան Հայաստանում) ժողովրդի այդ խավը պաշտոնապես գրանցվում էր Ա+Հյ ընդհանուր բանաձևով, օրինակ, Петр Иванов сын և Վարդան որդի Սահակի: Ընդ որում -ОВ ածանցը ուղղակի ավելացվել է հայրանունը առանց վերջինիս մեջ որևէ հնչյունական փոփոխություն կատարելու, այսինքն՝ հայրանվան արտասանված տարբերակին՝ Пирюмов, Киряковский, Саркизов, Пугосов, Мусесов և այլն: Եթե էսկադրոնի զինվորները երկար տարիներ ռուսական միջավայրում գտնվելով, հետագայում կարող էին այս կամ այն կերպ ճշտումներ մտցնել իրենց անվանման բանաձևերի մեջ (փաստերը ցույց են տալիս, որ այդպես էլ եղել է՝ հետագայում անվանման բանաձևի բաղադրիչները ռուսականացվել են ոչ միայն ձևով, այլև ըստ էության), ապա վաճառականները, որոնք դեպքից դեպք էին հայտնվում Ռուսաստանում և ստիպված էին գրանցվել զանազան պաշտոնական վայրերում, այնքան էլ չեն մտահոգվում և այս հարցում խստապահանջ չեն: Իհարկե, այստեղ ևս ընդհանուր առմամբ նկատվում են այն երևույթները, որոնք հատուկ էին նախորդ ցուցակին՝ բանավոր տարբերակի դրանցում, հնչյունական զուգահեռ ձևերի առկայություն և այլն, սակայն այստեղ որևէ նորմայով կաշկանդվածություն գրեթե չի զգացվում, տարբերակները ավելի շատ են: Բերենք օրինակներ՝ Кевант Васканов, Арутюн Тарасов (Торосов), Ариджан Арабетов, Мелюкагаов сын Сафар, Калущов сын Панус և այլն:

Այս շրջանում Երևանը և նրա շրջակայքը նկարագրված վայրերի համեմատությամբ բավականին պահպանողական են: Եվ զարմանալի չէ, քանի որ բնակչությունը դեռևս պարսկական տիրապետության տակ էր և առնչությունները արտաքին աշխարհի հետ խիստ աննշան էին կամ գրեթե չկային: Այս դեպքում, թերևս, բացառություն էր կազմում Նոր Զուղայի բնակչությունը:

Այսպես, մեր ձեռքի տակ է մոտ 400 վաղարշապատցիների մի ցուցակ, ուր բանաձևերը կազմված են Ա+որդի+Հյ, Ա+Տղ (-ցի) կաղապարներով՝ Սահակ որդի Մկրտչի, Օհան Արզրումցի և այլն: Ասվածի մասին են վկայում նաև «Կալվածագրեր» ժողովածուի փաստաթղթերը, ուր գերակշռում է առաջին կաղապարը և նրա հետ մեկտեղ հանդիպում են հետևյալ ձևերը՝ Զուռնաչի Հակոբ, Մսրենց Անախաթուն, Մելիք Մահմեդի Ալում, յէպդիջի Խաչատուր, ուստա Դավիթ, Մարութի Ուհանես, ինչպես նաև մի քանի բազմանդամ ձևեր՝ Զալտոնց Շահումենց Վարաքի Գրիգորի որդի Արսէր, Քալաբալենց Գրիգորի որդի մաշկակար էվում, Սիամոնի որդի Պալի Խուկազենց, Մուխրաթադեցի Պահաթուրի որդի մղոսի Գորբիկ և այլն:

Հանդիպում են այդ շրջանների համար արտասովոր հետևյալ դեպքերը՝ Գրիգոր Հովակիմեան, Էռաբել Խաչատուրով, Հարութիւն Մարտիրոսով, Կարապետ Օվանեսով, Զուղաեցի Ալահվերդիով և այլն, որոնք խիստ բնորոշ են դառնում այդ վայրերի համար, բայց հաջորդ դարում:

կրեանի և նրա շրջակայքի բնակչության անվանման բանաձևերի մեջ աչքի է ընկնում նոմենների բազմազանությունը և հիշատակված բանաձևերը այդ առումով և կայունացված նորմայի բացակայությամբ ավելի շատ միջնադար են հիշեցնում: Հայաշատ մյուս վայրերում վաղուց գերակշռություն էր ստացել որդի նոմենի միջադաս դիրքը, իսկ, ինչպես արդեն ասվել է, Աստրախանի հայությունը օգտագործում է արդեն նույնիսկ դի տարբերակը, իսկ լեհահայոց համար ռեդի-ն ետադաս դիրքում մասնիկի արժեք է ստանում և այլն, մինչդեռ այս տարածքում զգալի տարածում ունեին դուստր, կողակից, բաթին, հայր, մայր, քույր, մերձավոր նոմենները՝ Աղամալ հայր Կարբեցի Մկրտչի, Աղուտ մայր Լույսի, Անախաթուն քույր Պարսիսի, Աննախան որ է բաթին Ալիխանի, Ասլեր մերձավոր Լույսի, Ավետ ամուսին Նազուխանի, Մաքուր կողակից տէր Կարապետին և այլն: Մենք չենք կասկածում, որ նման կադապարների հանդես գալը ինչ-որ չափով պայմանավորված է արձանագրությունների բնույթով, բայց սա միակ բացատրությունը չէ, քանի որ առաջին տեղամեր չէ, որ տապանագրերից օրինակներ են բերվում: Այստեղ կարևորը լեզվական այն իրադրությունն է, որ առկա էր XVII դարի վերջում և XVIII դարի սկզբներին:

Թերևս ասվածի արտահայտություններից մեկը պետք է համարել անվանման բանաձևերում, այսպես կոչված, ամբողջական անձնանվանական տեքստերի հանդես գալը: Բերենք մի քանի օրինակ՝ Երևանցի Ղազար Սըհակ որ է որդի ջուղայեցի Միքայելին որ եւ ինքն է հայրը տիրացու Միքայելին, Էրեվանցի անյիշատակ ոսկերիճ Կոստան որ է որդի Մարութին, Թիլֆեցի Խնկենց Սարգիս որ է որդի Ուհանին, աշխատող Ղարիպ որ է բաթին Թումանի, Վարդիխաթուն որ է կողակից Երևանցի խառատ Գրիգորին, Մարիամ որ է կողակից դադաս Միքայելին և մայր էր տէր Ղազարին և այլն, ինչպես և հետևյալ երկու արձանագրությունները Լիվոռոյից՝ Ջուղայեցի Մանուէլ հոգևոր որդի Հայրսուպետին, Ղափանցի մահուեսի Պողոս որդի անաջողակ Ծատուրին:

Արևմտյան Հայաստանում, ըստ մեր ունեցած տվյալների, անվանման բանաձևերի հարցում հարաբերական հավասարակշռություն էր տիրում, որ արտահայտվում էր գլխավորապես երկբաղադրիչ բանաձևերի գերակշռությամբ, որոնց երկրորդ բաղադրիչը կազմված է կամ -եան կամ -ճի/չի, -ջի (երբևէն -օղլու) ածանցներով: Ինչպես և պետք է սպասել, -եան ածանցով կազմված անունները պատկանում են հոգևոր դասի ներկայացուցիչներին, ինչպես նաև ազգային ու մշակութային գործիչներին՝ Մանուկ Տորսունեան, Աբրահամ Ղարաօղլանեան, Առաքել Շահամիրեան, Հարություն Պենկլեան, Ջաքար Նորատունկեան, Եղիա Մարտիրոսեան, Հովհաննես Սիմոնեան, Մովսես Շիրինեան և այլն: Այս Բանաձևը մյուս խավերի ներկայացուցիչների վրա տարածվելու նկատելի միտում է ցուցաբերում:

Երկանդամ բանաձևերում հանդիպում են նաև երկրորդ բաղադրիչը -ցի (-ացի)-ով ձևավորված տարբերակներ՝ Հարություն Օրթագեղցի, Ղազար Մոկացի, Աստվածատուր Ֆահրապատցի, Ղազար Ակնեցի, Մանուել Բալուեցի և այլն:

Եռանդամ բանաձևերը կազմված են հիմնականում վերոբերյալ երկու տարբերակների համադրությամբ՝ Հարություն Մուրատեան Ապուլեխցի, Անտոն Աստվածատուրեան Բերիացի, Եղիա Կիւլապեան Գաղատացի, Պետրոս Ալեքսանեան Կամարակացի, Աբրահամ Արծրեան Այնթապցի և այլն:

Մյուս խավը ներկայանում է զլխավորապես –օղլու նոմեն-ածանցի օգ-նությամբ կազմված երկրորդ բաղադրիչով՝ Մաղաքիա Սամուէլ օղլու, Պետ-րոս Ուզունօղլու, Հայրապետ Տիրկերօղլու, Միքայել Զուռնաճիօղլու, Ստե-փան Նալպանտօղլու, Հերոնիմոս Ըգնավորօղլու, Հակոբ Սվաճիօղլու, Մուրաս Մուրասօղլու և այլն:

Արհեստավորական, ինչպես և աշխատավորական խավի ներկայացուցիչ-ներին նույնպես հատուկ են երկանդամ բանաձևերը, բայց այս դեպքում երկ-րորդ բաղադրիչը ձևավորվում է ճի (–չի, –ջի) ածանցով՝ Ստեփան Պասմաճի, Հովհաննես Սահաթչի, Եսայի Փեշտիմալճի, Սերոբե Օթուրաքչի, Քերոբե Գու-յումճու և այլն: Հանդիպեցին նաև Մեծմատենան, Կապուտիկյան մականվա-նական ծագում ունեցող ձևերը, խոզարածեան արտասովոր ձևը, ինչպես նաև Զոպանյան–Հովուեան կրկնակ ձևը միևնույն անձնավորության համար:

Արդեն նշվել է, որ հայերի անվանման այսօր ընդունված բանաձևը վերջ-նականապես ձևավորվել է XIX դարում:

Կարևոր նշանակություն ունեցավ Արևելյան Հայաստանի միավորումը Ռուսաստանի հետ, որին հաջորդեց Պարսկաստանից և Արևմտյան Հայաստա-նից զգալի թվով հայերի վերաբնակեցումը Արևելյան Հայաստան: Անվանման բանաձևերի միասնականացման բնագավառում տեղի ունեցող տեղաշարժերը ընդգրկեցին նաև ժողովրդի այդ հատվածները: Ելնելով եղած փաստերից, գտնում ենք, որ XIX դարը պետք է բաժանել երեք շրջանի. 1) դարի սկզբից մինչև 40-ական թթ. կեսերը, 2) 40-ականի կեսերից մինչև 70-ական թթ. և 3) 70-ականի կեսերից մինչև դարի վերջը: Առաջին շրջանում հայերի զգալի մասը հարմարվում է նոր պայմաններին: Երևանի և նրա շրջակայքի բնակ-չության անվանման բանաձևերում նկատելի է նախորդ դարին հատուկ բա-նաձևերի գործածություն՝ Պարսամի որդի Ազարե, Պապի Վարդանի որդի Սարգիս և այլն: Շրջանի վերջում երևում են որոշակիորեն ձևավորված երկ-անդամ և եռանդամ բանաձևեր, որոնց բաղադրիչներից մեկը՝ հայրանունը, կազմված է –եան և –ով ածանցներով՝ Սահակ Մելիքեան, Յակոբ Աբելով: Նկատելի է, որ այդ նոր բաղադրիչի տեղը բանաձևի կազմում այնքան էլ հաս-տատուն չէ. Ես Մկրտիչս վկայ Մարութեան, Ես Դաւուստս Աղամեան վկայ, Ավետեան թարգի Ակոբ և այլն: Երբեմն վերոհիշյալ ածանցները բաշխվում են որպես հայրանվան և տոհմանվան ածանցներ՝ Յուսեփ Սարուխանեան Մա-նուչարով: Արհեստավորական խավի ներկայացուցիչների համար հաճախ, ինչպես և մինչ այդ, բավարարվում են երկանդամ պարզագույն բանաձևով՝ զարգար Պողոս, գտակկար Սարգիս, ոսկերից(չ) Կոստանդ, Ղաւզազ Միքայել և այլն: Մինչդեռ, օրինակ, 1820 թ. Կարինում հետևյալ ձևերն են հանդիպում՝ Գէորգ Պաղտասարեան Պայպուրտցի, Թումաս արաբկերցի Քեօսեան, Ղա-զար Ստեփոեան և այլն:

Երկրորդ շրջանում անվանման բանաձևերը անցնում են ձևավորման շրջ-ջան և վերջում տոհմանվան հիմքի վրա երևան է գալիս ազգանունը իբրև մար-դանվանական նոր երևույթ: Նկատվում են ազգանվան կազմության զուգահեռ ձևեր –եան (–յան) և –եանց (–յանց) ածանցներով և, սրա հետ կապված, զգալի անորոշություն և շփոթ, որի հետևանքով տոհմանուն—ազգանուն անց-ման ժամանակ երբեմն ոչ հարազատ –ով ածանցի օգտագործում:

Լիվոռնոյից վկայված են այդ հատվածի համար սովորական երկանդամ բանաձևեր՝ Գրիգոր Ալեքսանդրեան, Գէորգ Զաքարեան և այլն: Մյուս հայա-շատ վայրերում և բնաշխարհում տարածված –եանց-ով կազմություն այստեղ չի հանդիպում նախ այն պատճառով, որ երկրորդ բաղադրիչները Լիվոռնո-

յում ղուտ հայրանուններ են և ապա՝ ի սկզբանե այս գաղութին —եւց-ով և Հետևաբար —եւնց-ով կազմութիւններ հատուկ չեն եղել:

Լեհահայ գաղութը ազգային նկարագիրը պահպանում է իբրև ավանդութիւն՝ բանաձևերը եռանդամ են ձևավորված տեղական կաղապարով և միայն Լրրեմն հիմքերն են հայկական՝ Գրիգորի Բվանով Խինգանոսով, Ֆեոդոր Խրիստափորով Գալուստովիչ, Գրիգորի Նիկոլայիվ Չայեկովսկի և այլն:

Երրորդ շրջանում վերը նշված զուգահեռութիւնը աստիճանաբար վերանում է Որոշակի բաշխում է նկատվում —յան(—եան) և —յանց(—եանց) ածանցների համար, առաջինը՝ հայրանուն, երկրորդը՝ գերդաստանի անուն, ապա ազգանուն կալմելու համար: Երջանի վերջում, կապված ազգանվան հաստատման ու քաղաքացիութիւնը ստանալու հետ, —յան-ը հաղթում է: Հայրանվան համար օգտվում են —ի ածանցից:

Այսպիսով, այսօրվա եռանդամ կաղապարը միայն բաղադրիչների բանակով է նույնանում այլ ժողովուրդների անվանման կաղապարների հետ: Նրա կառուցվածքը ազգային խոր արմատներ ունի և միանգամայն ինքնատիպ է:

ФОРМУЛЫ ИМЕНОВАНИЯ АРМЯН

Т. М. АВЕТИСЯН

(Резюме)

Под «формулой именования» понимается определенный порядок расположения антропонимов и номенов в официальной идентификации личности. С этой точки зрения рассматриваются формулы именования армян с IV по XIX в. и модели их модификаций и совершенствования. В частности, делается попытка показать, что тенденции и отработка современной трехчленной формулы (фамилия—имя—отчество) восходят к исконным традициям армянской антропонимики. Причем исконный характер носят не только элементы этой триады, но и, что очень важно, морфология составляющих ее членов. Анализ материала (он черпался из историографических и лексикографических источников) приводит к мысли, что рассматриваемые классы антропонимов и номенов легли в основу принятого у армян фамилиеобразования. Этот вывод позволяет пролить свет на вопрос, почему в номенклатуре армянских фамилий нередки иллызычные основы. При этом исследуется широкий ареал расселения армян, в том числе—в армянских колониях за рубежом. Трехчленная формула только по своему составу совпадает с формулами именования других народов; она в основе своей исконна и самобытна.